

ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԱՆԴՅԱՆԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ*

Հայկական հարցի օգտին ակտիվ քարոզչություն իրականացնելու մասին ՀՅ Դաշնակցության երկրորդ ընդհանուր ժողովի (1898 թ.) որոշումներն¹ ի կատար ածելու նպատակով Եվրոպա մեկնած Քր. Միքայելյանի ջանքերով «Դրոշակի» խմբագրության շուրջը համախմբված շնորհալի երիտասարդների թվում էր դարաբաղցի ուսանող Միքայել Հովհաննիսյանը, ով 1897-ին ավարտել էր Ժնևի համալսարանը:

Պատմական Արցախի նշանավոր Քյաթուկ գյուղից սերող շնորհալի երիտասարդը, անմնացորդ կերպով նվիրվելով Քր. Միքայելյանի սկսած մեծ գործին, որպես տաղանդավոր հրապարակախոս ու ինքնատիպ մտածող՝ իր ձակատագիրն ամբողջությամբ կապեց ՀՅ Դաշնակցության սկսած եվրոպական քարոզչության հետ: Հայրենի Արցախի գավառներից մեկի անվանումը պատճենող «Վարանդյան» ծածկանունով նա դարձավ սկզբում «Դրոշակ»-ի խմբագրության², իսկ քիչ անց նաև՝ ֆրանսերենով լույս տեսնող «Պրո Արմենիա» հանդեսի ամենաբեղուն աշխատակիցը, որի էջերում հայաշունչ «Վարանդյան»-ը փոխակերպվեց ֆրանսերենին ավելի հոգեհարազատ «Վարանդի»-ի:

Այդ շրջանից Մ. Վարանդյանը ստանձնում է նաև ՀՅ Դաշնակցության՝ Եվրոպայի սոցիալիստական կուսակցությունների հետ կապերի համակարգողի³, իսկ կուսակցության երկրորդ սոցիալիստական ինտերնացիոնալի անդամ դառնալուց հետո (1907 թ.)՝ այդ կազմակերպությունում ՀՅԴ ներկայացուցչի պարտականությունը, որը վարում է երկար տարիներ⁴:

Բազմաթիվ են Միքայել Վարանդյանի գրչին պատկանող մեծ ու փոքր աշխատություններն ու հոդվածները և կուսակցական ընկերներին ու եվրոպացի ձանաչված մտավորականներին ուղղված նամակները: Մեծ թիվ են կազմում նաև տարբեր երկրների արխիվներում մինչ օրս պահպանվող ընտիր ֆրանսերենով շարադրված նրա գրությունները, որոնք հիմնականում նվիրված են Հայկական հարցի պաշտպանությանը:

2014 թ. ամռանը՝ Ռուսաստանի պետական սոցիալ-քաղաքական պատմության արխիվի «Երկրորդ սոցիալիստական ինտերնացիոնալի» ֆոն-

*Ընդունվել է տպագրության 22.02.2016:

1 Տե՛ս **Տասնապետեան Հ.**, Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ. Ընդհ. ժողովը (1890-1924), Աթէնք, 1988, էջ 57:

2 Տե՛ս նոյն տեղում, էջ 56:

3 Տե՛ս **Խոսրով Թիթիւնձեան**, Միքայել Վարանդեան..., «Հայրենիք» Պոսթըրն, 1936, N 4-5: **Харазян М.**, Воскресший из забвения, Ер., 2004, էջ 23:

4 Տե՛ս **Լազեան Գ.**, Յեղափոխական դէմքեր, Գահիրէ, 1945, էջ 262:

դում⁵ աշխատելիս, մեր ուշադրությունը գրավեց Միքայել Վարանդյանի գրչին պատկանող մի ֆրանսերեն ձեռագիր, որը գրվել է 1916 թվականին՝ Մեծ եղեռնի մասին սահմուկեցուցիչ լուրերի անմիջական ազդեցության տակ: Թեև հրապարակվող փաստաթուղթը ռուսաստանյան արխիվում ներկայացված է որպես նամակ, այն իրականում Հայոց ցեղասպանության վերաբերյալ մի շարք դրույթներ և թվեր պարունակող գրության սևագիր տարբերակն է:

Ներկայացվող փաստաթղթի արժեքն այն է, որ արդեն 1916 թվականին նրանում հստակորեն արձանագրվել են մի շարք թեզեր, որոնք այսօր քաղաքացիություն են ստացել հայ, ինչու չէ, նաև համաշխարհային պատմագիտության մեջ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է՝

-Արևմտյան Հայաստանի նահանգները հայ ժողովրդից դատարկելու՝ Թուրքիայի պետական քաղաքականության մեջ հստակ ժառանգորդականության առկայության փաստի, ինչպես նաև հայերի հայրենագրկման հաջորդական հանգրվանների (Աբդուլ Համիդ, երիտթուրքեր) արձանագրմանը,

-երիտթուրքերի կողմից վաղօրոք մշակված՝ հայերի ամբողջական բնաջնջման ծրագիրն իրագործելու համար պատերազմն իբրև առիթ օգտագործելու նպատակադրումի բացահայտմանը,

-պատերազմի ժամանակ օսմանահպատակ հայերի կողմից պետության հանդեպ իրենց քաղաքացիական պարտականությունները կատարելու իրողության փաստագրմանը,

-Հայոց ցեղասպանության իրականացման կոնկրետ մեխանիզմների ու միջոցների (արական սեռի ներկայացուցիչների ոչնչացում, գեղեցիկ կանանց և աղջիկների առևանգում, երեխաների, կանանց ու ծերերի արքայադուրս) հետազոտությանը:

Այն իրողությունը, որ այս հաստատումներն ու եզրակացությունները արձանագրվել են արդեն 1916 թվականին՝ Միք. Վարանդյանի ճշգրիտ ու առարկայական հարցադրումների միջոցով, հերթական անգամ գալիս է վկայելու, որ անցած 100 տարիների ընթացքում Հայոց ցեղասպանության պատմական եղելությունը հերքելու բոլոր փորձերն ապարդյուն են անցել:

Սակայն Մ. Վարանդյանի հարցադրումների մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում արաբական անապատներ արքայադրված 500 հազար հայ կանանց ու երեխաների փրկության համար Գերմանիայից ակնկալվող աջակցության մասին դատողությունները: Վերջիններս վկայում են, որ այս գրությունը ստեղծվել է 1916 թ. առաջին կեսին, քանի դեռ անապատներ արքայադրված բնակչությունը չէր ենթարկվել խոշոր կոտորածների: Դրանք տեղ են գտել նույն թվականի աշնանը՝ Դեր-Ջորում և նրան հարակից արքայադրվածներում: Ուստի, ամենայն հավանականությամբ, Մ. Վարանդյանի այս ուշագրավ ձեռագիրը արաբական անապատներում ծվարած արևմտահայ արքայադրվածներին փրկելու մի վերջին ու հուսահատ փորձի՝ Գերմանիայի իշխանություններին ուղղված գրության սևագիր օրինակն է:

Վահագն Ա. Հակոբյան
Պարս. գիրք. թեկնածու

5 Стлб Российский Государственный Архив Социально-Политической Истории, ф. 340, оп. 4, д. 169, с. 1-3, «Письмо М. Варандяна в Коминтерн об армян[ax] Западной Армении. На французском языке, 3 страницы, рукопись 1916 г.»

1. Երկար ժամանակ թուրքական կառավարությունը փորձում է «ազատվել» հայկական տարրից՝ որպես Թուրքիայի ասիական հատվածի ոչ մուսուլման տարր, ինչը հաճախ հանգեցնում էր մեծ տերությունների միջամտությանը:

2. Թուրքական կառավարությունը, թուրքերը՝ մեծ ու փոքր, գիտեին միայն հայկական հարցը լուծելու ջարդերի տարբերակը: 1895-1896 թվականներին Արդուլ Համիդի հրամանով կատարված ջարդերից զոհվեցին 300000 հայեր: Կոտորածները ավարտվեցին Անգլիայի և Ֆրանսիայի միջամտության շնորհիվ:

3. Այս համաշխարհային պատերազմի [սկսվելուց] հետո, երբ Անգլիան և Ֆրանսիան այլ տեղերում զբաղված էին, Թուրքիան հարմար առիթն օգտագործեց իր շատ վաղուց կազմած ծրագիրը՝ հայերի ամբողջական բնաջնջումն իրագործելու համար:

4. Չնայած Թուրքիայի հայերի հավատարմությանը, ովքեր հենց պատերազմի սկզբից իրենց պարտքն էին կատարել թուրք պետության առջև, վերջինս հայ ազգի հետապնդման հրաման տվեց, այնպիսին, ինչպիսին մարդկային պատմությունը երբևէ չէր տեսել նույնիսկ Ներոնի և Թամերլանի ժամանակ:

5. Արական սեռի բնակչության գրեթե 3/4-րդը դաժանորեն սպանվեց: Գեղեցիկ կանայք և աղջիկները հարեմ ուղարկվեցին և մոտ 500000 ժողովուրդ՝ մեծ մասամբ բաղկացած երեխաներից, կանանցից և ծերերից, աքսորվեցին իրենց ավերված տներից դեպի Միջագետքի հեռավոր անապատներ, Բաղդադի երկաթգծի երկայնքով (անկասկած, գերմանական օժանդակությամբ):

6. Այդ բնակիչները շարունակում են քարշ տալ իրենց թշվառ գոյությունը: Նրանք մատնված են սովի, համաճարակների, բոլոր տեսակ գրկանքների: Չնայած չեզոք երկրների մարդասիրական առաքելությանը, այնուամենայնիվ, հնարավոր չեղավ արդյունավետորեն օգնել թշվառության մեջ հայտնվածներին: Մի քանի ամիս անց այս բնակչությունը կարող է ամբողջովին անհետանալ: Եվ այսպես կկործանվի նաև թուրքական Հայաստանը:

7. Միայն գերմանական կառավարությունը կարող է ստիպել թուրքերին՝ դյուրացնել օգնությունների մուտքը և փրկել մեկուկես միլիոն մարդկային կյանքեր: Բեռլինի մեկ բառը Կ.Պոլսում բավարար է, որ այդ ասվի ողջ մարդկության անունից: Հայերը եղել են և կլինեն գերմանական մշակույթի միակ կրողը Արևելքում:

Վահագն Ա. Հակոբյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են 19-րդ դարի վերջերից հայ իրականության մեջ սոցիալ-դեմոկրատ ական շարժման տարածման, տեղայնացման, ինչպես նաև սոցիալ-դեմոկրատական և ազգային կուսակցությունների պատմության հարցերը: Հեղինակ է մեկ մենագրության և վեց գիտական հոդվածի:

FOLLOWING A NOTE BY MICHAEL VARANDYAN

Vahagn A. Hakobyan

Keywords – Mikael Varandyan, “Pro-Armenia”, Young Turks, the Armenian Genocide, Western Armenia, Der Zor, Germany, draft.

ПО СЛЕДАМ ЗАПИСКИ МИКАЭЛА ВАРАНДЯНА

Ваагн А. Акопян

Ключевые слова – Микаел Варандян, “Про-Армения”, младотурки, Геноцид армян, Западная Армения, Дер-Зор, Германия, черновик.

1. Depuis longtemps le gouverne-
ment turc chercha à "se débarrasser"
de l'élément arménien qui comme élément non musulman dans la Turquie d'Asie, se préoccupait surtout
l'interférence des grands puissances.

2. Le gouvernement turc —
— était au premier tour — ne
connaissant qu'une seule
méthode pour résoudre la
Question Arménienne, le massacre. En 1895-
1896 les massacres ordonnés par Abdul Hamid
firent 300,000 victimes.
L'interférence de l'Angleterre et de la France
mit un terme aux massacres.

3. Avec cette guerre mondiale, l'Angleterre et la France étant occupées ailleurs, la Turquie eut le moment opportun pour réaliser son ancien projet d'extermination totale des arméniens.

4. Malgré la loyauté des arméniens de Turquie, lesquels se sont fait dès le début de la guerre leurs dévoués alliés de l'Etat turc, celui-ci ordonna des persécutions contre le quart arménien, telles que l'histoire turque n'a jamais connues, même du temps de Akbar et de Tamerlan.

5. Environ 3/4 de la population totale male fut intentionnellement massacrée. Les filles et les femmes de quelque beauté furent emmenées aux harems et une population d'environ 500,000 composée en grande partie d'enfants et de vieillards fut classée de leurs foyers ruinés dans les latrines désertes de villes septentrionales, le long de Bagdad et Bahar (sans doute sur une installation allemande).

6. Cette population traîne une existence des plus misérables, elle est exposée à la famine aux épidémies, et à des privations de toute sorte, elle meurt en masse,

et les missions philanthropiques des pays occidentaux (Américain, Suédois, etc.) par malgré leurs efforts, ne réussent pas à venir efficacement en aide à ces misérables.

Quelques mois après, cette population aura peut être complètement disparu. Et ainsi l'ancien turqu sera anéanti.

7. "Seul le gouvernement allemand peut agir sur la Turquie, en facilitant l'arrivée des secours (pains, aide médicale, etc.) et faire vivre un demi million d'êtres humains. Au mot de Berlin à Constantinople suffira."
Que ce mot soit dit, au nom de l'Humanité!"